

ՀԱՅ ԲԺՇԿԱԿԱՆ ԶԵՌԱԳԻՐՔ Ս. ՂԱԶԱՐՈՒՔ ՎԱՆՔԻՆ

(Շար. տես Բազմավեզ, 1924 էջ 263)

ԺԺ.

ԲԺՇԿԱՐԱՆ ՊՈՆՏՈՍՍԱՅԻ ՍԱՀԱԿԻՆ

Փաղուածոյ բժշկարան մ'է սա, կամ աւելի դեղերու հաւաքածոյ մը, զոր գրի առած է ինքն իսկ Պոնտոսացի ՍԱՀԱԿ ԲԺՇԿԷՐ, որ 1763ին կը գտնուէր Եւզո-կիւս, ինչպէս կ'իմանանք Զեռագրին Յիշատակարանէն, և ուր գրած է այս բժշկարանը:

Հաստ կողքերով կաշէկազմ լաւ պահուած ձեռագիր մ'է և այս հատորը, որ կը կրէ 538 թուահամարը:

Իւր մեծութիւնն է 20 հարիւրորդամեղր, լայնութիւնը 15,5 հարիւրորդամեղր, իսկ թանձրութիւնը 4,5 հարիւրորդամեղր:

Ունի 143 էջ զրութիւն և 71 թերթ.

Թուղթը բաւարակեալ է, գիրը թէև նոսր՝ բայց շեղագրի մօտեցող, միէջեան և շատ ազդեղ գիր մը:

Հատորին սկիզբը կայ բառարան մը, որուն վրայ նշանակուած է, թէ՛

«այս յարարացոց, ֆուսի, քիւրքի և Հայոց բառն կոս հշանակէ»:

և կը սկսի Արքէն մինչև Ֆ գրել, կարգ մը բառեր, որոնք օտարալեզու են արդարեւ, բայց իրենց զէջն ունեցածներն ալ հայերէն ըլլալէ աւելի այլալեզու են բոլորովին:

Այս բառարանին վերջաւորութեան կից է որ կը կարդանք Սահակ Պոնտոսացիին մէկ Յիշատակարանէ՝ այսպէս.

«Մանկի սիրելի եղբայր իմ ընրերցոյ. «այս գրգիս մէկ մասն է մարդման և «դիտագիւն թշկալան դեղիւր. և միւսն մասն, «Համարտ կայսերոյն որ և Մարկոս Աւետիսն սեռանի, երաւ գրգին շատ կարեաց և իմց մարդման ծաղկաբոյ եմ տարերի:

«Փանդի կարն իմ այսքան էր, խնդրեմ ի «ձեռք անդատիրս առնել զմեզ, և որ ընթեռ- «նու կամ օրինակէ, հանկերձ ձեռքդարս, «և և ընտանեօքս միով հայր մերիս զմեզ «յիշէ, յիւրք յիշեալ լինի ի քրիստոսէ, «ամեն»:

«Գրեցաւ ի քաղաքն Երովկիայ, յամի «նոն 1763, նոյնեմբերի ամսոյն, ձեռամբն «Պոնտոսացի, անկիրք և անխնայտ եռասոս «ծառայ ամենեցուն թիւի Սահակէ, որ և «ամաց էր 68ից. Յայսմ յամի քահպեցաւ «քերդն թօխտարս փետրուարի 21ին, և մէկ «մասն ալ տիրեցաւ 23ին»:

*

Ինչպէս կ'երեւի սոյն Յիշատակարանէս՝ Սահակ ԲԺՇԿԷՐ Պոնտոս քաղաքին մէջ ծնած կ'ըլլայ՝ 1655ին, և իւր 68 տարեկան հասակին է որ գրի կ'առնէ այս բժշկարանը 1763ին: Ձի ծածկելու բնաւ թէ զայն հաւաքած է զանազան տեղերէ: Եւ արդարեւ զայն ուշադրութեամբ աչքէ անցնելով կը տեղեկանանք, թէ Ամբրստովաթի կամ Ասորի գործերէն վերցուած բաներ են բոլորի ալ, որոնց շնորհիւ սակայն՝ Սահակ Պոնտոսացիին կրցած է բժշկութեան արուեստը Քաֆաէն վերջը կիրարկել Եւզոկիոյ մէջ, ուր անշուշտ ունեցաւ մեծ համբաւ և ուր գուցէ մեռաւ և ինքն:

Այս Յիշատակարանէն յետոյ կը սկսի իւր բժշկարանը և նախ կը գրէ անոր պարունակութեան այբուբենական ցուցակը, որով կարելի է դիւրաւ դատել, թէ զանազան հիւանդութիւններու համար յանձնարարուած այլեայլ դեղերու կուտակում մ'է:

*

Սահակ պոնտոսացի՝ բացի բժշկասիրութենէ սիրահար եղած է նաեւ երեսիլ արանց գործերուն, զի՝ ինչպէս ինքն ալ կը յայտնէ՝ կից իւր բժշկարանին կը գնէ Մարկոս Աւետիսի գործերէն քաղուածոյ մաս մը. հին ատեններու մէջ բժշկութեամբ պարապողներուն բոլորն ալ չէին թերանար այս տեսակ ուսումնասիրութեան

մէջ, և Արիստոտելի, Պղատոնի, Մարկոս Աւրելիոսի և ուրիշներու հոյակապ գործերովը պարապելով, կը ջանային իրենց արունասին փխլիստփայական շապրով մը աւելի փայլ մը, պատիւ մը բերել:

Ասպէս՝ իւր բժշկարանին միջանկեալ մասը Արիստոտելի պատմութեան յատկացնելով՝ կ'աւարտէ զայն նուիրելով յատուկ Գլուխներ զանազան Հիւանդութիւններու, որոնց վերջինը վերեւ ցումն է և թրքնէֆես ցաւը:

Ի.

ԲԺՇԿԱՐԱՆ ԹՈՒՐԳԵՐԵՆ - ՀԱՅԵՐԵՆ

Բժշկարանս կիսով հայատառ թուրքերէն գրուած, և կիսով ալ Հայերէն, աշխատութիւն է նոյնպէս նախաշարժուած Սահակ բժիշկ Պոնտացիին: Թէև որ և է յիշատակութիւն մը չիկայ մէջը այս մասին՝ բայց գրութիւնը այնչափ նման է նախորդ երկու բժշկարանին՝ որ կարելի չէ զայն ուրիշ գրիչի վերագրել:

Խոշոր հատոր մ'է և այս, կաշէկազմ հաստ կողքերով, որուն մեծութիւնն է՝ 20 հարիւրդամեղը, լայնութիւնը 16 հարիւրդամեղը, իսկ թանձրութիւնը 3,5 հարիւրդամեղը. թուղթը սովորական բամբակեայ է, գիրը շեղագրի մօտեցող նոտր, բայց սգեղ: Կը կրէ 1375 թուահամարը, իջագրութիւն չունի, որովհետև մէջտեղի և վերջը կան շատ պարապ թերթեր, որոնց վրայ կ'երևի թէ Գրիչը ունէր աւելցնելիք մասեր, և այս պատճառաւ չէ զրած էջերու թուանշանները:

Հատորին առաջին կէսը թուրքերէն է, իսկ երկրորդը Հայերէն, զոր նախորդ Հատորին պարունակութեան յար և նման կը գտնեմ:

ԻԱ.

ԳԻՐԳ ՈՐ ԿՈՉԻ ԿՐԹՈՒԹԻՒՆ ԲԺՇԿՈՒԹԵԱՆ

Ձեռագիրս՝ որ 21 թուահամարը կը կրէ՝ լատիներէն թարգմանուած գործ մ'է: Մեծութեամբ 21 հարիւրդամեղը, լայ-

նութեամբ 15 հարիւրդամեղը, իսկ թանձրութեամբ 3 հարիւրդամեղը: Կը բաղկանայ 340 էջ գրութենէ, որ ամիսփուած է 170 թերթերու մէջ, սկիզբը և վերջը բաւական թուով պարապ թուղթեր ունենալով:

Կ'երևի որ երկու հատորէ պիտի բաղկանայ եղբի ամբողջը, բայց ասի առաջին հատորն է միայն, ինչպէս գրուած է մէջը: Առաջին էջին վրայ կը կարդանք.

Գիրք Առաջին, որ և լատարակ կտնեն Արարեալ ըստ շաւղաց մեծամեծ թշկապեաց, և հաշուատր փխլիստփայից՝ Պղատոնի, Արիստոտելի, Սոքրատոսի, Գալենոսի և եօրե թշկապեաց:

Թարգմանեալ զգոշութեամբ ի յարիսկան բարբառոյ՝ յարապացոյ լեզու:

Կրկին բարգմանեցեալ յարապացոյ լեզուն՝ ի հոյ բարբառ յամեմեկ վարդապետէ, ըստ ոճի աշխարհաբառ լեզուի, ի Պիրուր բաղարի:

Գարնեալ օրինակեալ նորոց սրբագրութեամբ ըստ կտրի փոխելով զաշխարհաբառն ի գրաբառ յամեմեկ զպրե յեղօրէ ֆերթօ Յարաբիւնի մեծի թշկապետի յամի Տեսան 1779, Նոյեմբերի 9 ի Գարափա:

Ըստ այսմ, այս գործը նախապէս լատիներէն գրուած ըլլալով, կը թարգմանուի Արարեբէնի, ուրկէ աշխարհաբարի կը թարգմանէ Պէյրութի մէջ ՎԱՐԻԱՊԵՏ մը, որուն անունը դժբախտաբար գրուած չէ. յետոյ 1779 Նոյեմբերի 9ին ալ աշխարհաբարէ գրաբարի զայն կը վերածէ Բեմբրօ (Պետրոս) Յարաբեան բժշկապետին եղբայրը, որուն անունն ալ չէ յայտ:

*

Գրաբար և նստագիր աշխատութիւն մ'է, առաջին մասը կը խօսի թշկապեան տանձմունին վրայ համաձայն Հիպպոկրատ, Գաղիանոս բժշկապետներու և նաև Արիստոտէլի ու եօրե բժշկապետներու վարդապետութեան:

Հայց - պատասխանի ձևով է գրուած, և երբ կը հարցնէ. Զի՞ն է թշկապիւնը, կը պատասխանէ. « Բժկապիւն է արունաս

« տեսական որ քննէ ի մարդկային մարմնի
« վասն տաղանդաւոր, և ի քառեայ աստղ-
« չորքանն զի պանծացի մնացեայ աստղ-
« չորքանն, և դարձեայ աստղի պոկտսե-
« ցեայ » :

« Արի արունատ քանգի ի գործ ածէ ի
« կողմն զպնդորայս, և ուսուցանէ զհերպն
« և զպոկն նոցա : Արի տեսական, քանգի
« զամենայն արնեստս թշկոտրեան ըմբռնէ
« ի տեսումն իմացականին, որ է միտքն » :

Եւ այսպիսի հարց — պատասխանինե-
րով, թշկոտրեան իմը, մարդկային մարմնի
առողջապահութեան պայմանները, մարդկային
մարմնին քաղաքաբանը, սննդական գոր-
ծողութիւնները՝ որք են քաղաքական, հոգ-
րական, պահողական, և արտահոսական,
պատմելէ յետոյ, կը խօսի մարդու բնա-
կան շնորհութեան ու հիւանդութիւններու
ամէն կերպին վրայ, ու կը սկսի իր խրատ-
ները բժշկական արուեստով պարապող-
ներու ուղղութեամբ :

*

Յոյց կու տայ թէ ինչպէս ճանչնալու
է հիւանդութիւն մը, թէ ինչ է նաւազը
(զարկը), ապա կ'անցնի խօսիլ մեզի և
այդի բնական և անբնական վիճակներու
մասին, և այս նիւթերուն կը նուիրէ եր-
կար էջեր :

Ասոր յաջորդ Գլուխը կը հստէ երու-
խաներու տողչորքեան վրայ, և կը յատ-
կացնէ ասոր չորս պրակ, որոնց մէջ ման-
րամասն կը զրէ, թէ ծնունդէն մինչև ոտքի
ելլելը երախայն ինչպէս նայելու է և ինչ
տեսակ խնամք տանելու է :

Հատորին մնացեալ գլուխները ընդհա-
նուր Ախտաբանութեան և Առողջապահու-
թեան վերաբերեալ լաւ դասեր են, թէև
այսօրուան համար բոլորովին հնացած :

Ասոնցմէ վերջ իւր աշխատութեան րո-
ւոր գլուխներուն պարունակութեան մէկ
համառոտագրութիւնը կը դնէ, և ապա կ'անց-
նի զրել անդամազննական մաս մը, որուն
մէջ կը նկարագրէ ոսկորները, շիղերը,
երակները, և մարմնի բոլոր մասերը, գե-
ղեցիկ բառեր կը գտնեմ այս մասին մէջ :

զոր օրինակ վոտե (crâne) ասպար կամ
պոտե (frontal), սղեի (colonne vertè-
brale) ճնկակ ոսկր (շնչառութեան յա-
տուկ), ասպնակ (omoplat) մարսակ (մար-
սողութեան յատուկ) և այլն, զորս երկար
կ'ըլլայ առ այժմ գրել հոս մանրամասն :

*

Հատորին ամենէն վերջը կը զրէ մի-
զաքնութեան գլուխ մը, որուն մէջ անոթ-
ներու, կամ լաւ եւ է բնի, շիջերու գծա-
գրութիւններ զննելով ցոյց կու տայ առան-
ձին առանձին, թէ բժիշկ մը մէջը ինչպէս
պիտի դնէ շիշին մէջ, ինչպէս զայն պիտի
բռնէ, ինչ բան պիտի փնտռէ, առողջ
կամ անառողջ ըլլալը իմանալու :

Կը պատուիրէ վիճաբարար դիտել
մէզին գոյնը, հոտը, համը ??, մրուրը, թէ
թարախ կամ արիւն կայ մէջը, և ըստ
այնմ կ'որոշէ հիւանդութեանց տեսակը :

Անշուշտ արդի միզաքննական մէթոտ-
ներուն ըով, շատ նախնական ձև քննու-
թիւն մ'է ձեռագրիս ցուցադրածը, բայց
գիտնանք, թէ գիտութեան մէջ ամէն բան
կամ գիւտ ունեցած է իր սաղմնային վի-
ճակը, որ սակայն զի դադրիւ երբեք
հետաքրքրականութիւն չարժեկէ :

*

Հազար անգամ երախտապարտ պէտք է
ըլլանք Պէյրուցիքի անծանօթ հայ վար-
դապետին, որ նախանցեալ Գարուն հայա-
ցուցած է այս աշխատութիւնը. երախ-
տապարտ նաև անոր երկրորդ թարգման-
չին, որուն անունը եթէ ծածկուած կը
մնայ, զոնէ սա առաւելութիւնը կ'ունեն-
անք, որ ասոր շնորհիւ կը ճանչնանք
իր եղբայրը՝ 18 դարու մէջ ապրած հայ
բժիշկ մը, Բեթօ (ՊԵՏՐՈՍ) ՅԱՐՈՒԹԻ-
ՆԵԱՆ :

Այս Պիտրոս բժիշկը, որուն անունը
թէև նոր կ'ուսանինք՝ բայց կը պատկա-
նէր խումբին այն կաթողիկէ Հայերուն՝
որոնք լրագրութեանց Զաքարիա Պատրիար-
քին օրով Գաղատիա արարութեացան. ինչ-
պէս կը կարգանք այս Պատրիարքին ձե-

ռազիր կենսագրութեանը մէջ: Պետրոս Յարութիւնեան ուրեմն նախ Պօլսոյ մէջ անուանի բժիշկ մ'էր, և ապա եղաւ եւրեկի՝ Գաղատիոյ մէջ, և այս ձեռագրին թարգմանութեան ժամանակը՝ 1779 նոյեմբեր 9ին հոն կը գործէր:

ԻՅ. ԻԳ. ԻԳ. ԻԵ.

Թ Ե Ր Ի Բ Ժ Շ Կ Ա Ր Ա Ն Ն Ե Ր

26, 332, 337 և 774 թուահամարներով փոքրիկ հատորներ են ասոնք, նոսրագիր, անթուական. երբ և ո՞ւր ընդօրինակուած ըլլալին ալ անյայտ:

Չորս ալ տարբեր տարբեր գրիչներէ մասնակի արտագրութիւններ են Ամբրստլաթի գործերէն քաղուածոյ, և այնպիսի սխալ կերպով մը կատարուած՝ որ բուն հեղինակին ալ շատ պատուաբեր չեն ըլլար:

Այսպիսի կիսատ ընդօրինակութիւններ պարունակող ձեռագիրները զժրախտաբար շատ են, և բնաւ օգուտ մը չեն ընծայեր մայր բնագիրներու բազմատութեան:

774 թուահամարը կրող հատորին մէջ գրուած է, թէ Հ. Ներսէս Սարգիսեան ի Հայս կատարած ուղեորութենէ զարձին՝ բերած է զայն Ս. Դազար, և թէ « Յիշատիկ է Կարապետ Աղայի Գուշաղեանի »: Իսկ 332 թուահամարը կրողին մէջ ալ՝ « Հէքիմ Սահակին է տրապիկոնցոյ »:

Գուշաղեանինը սկիզբն ունի Ախթարական մաս մը, որու շնորհիւ իբր թէ կարելի կ'ըլլայ գուշակութիւններ ու բժշկութիւններ ընել: Մ'նացած մասը Ամբրստլաթի Օգուտ բժշկութենէն քաղուած է սխալագիր և զժուարժնեղի:

26, 332 և 337 թուահամարներու պարունակութիւնները ամբողջովին « Անգիտաց Անպետ »-ին կը վերաբերին: Ասոնցմէ մեծագոյն մասը կը գտնուի 26 թուահամարին և 332 թուահամարներուն մէջ. այն ալ համառոտուած և շատ սխալներով աղտաղուած:

ՏՕԲԹ. ՎԱՆԸԱՄ Յ. ԹՈՐԳՈՍԵԱՆ

Վիեննայի — Ս. Դազար

14 Յունուար 1923

(Շարունակելի)

Գ Ր Ա Կ Ա Ն

Ո Ի Խ Տ Ա Ի Ո Ր Ն Ե Ր

— — —

Ո ՂՋՈՅՆ ձեղի, ջինջ հովիտներ Պագոսեան,
Ողջոյն քեզ, ո՞վ ամայութիւն լայնածիր,
Ուր վէս Հոովմի փառքերն ինկած աւերակ
Դարուց բեռին տակ կը հեծեն անյարիր:
Ահա շիկնող արփին իջած հորիզոն,
Ահա ստուերները շրջմոյլի կ'երկարին...
Գիշեր, աստղեր յաջորդելով իրարու:
Ու սրտատրոփ ուխտաւորաց կարաւանն
Երազասոյր կառատորմով ուղեգնաց